

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հերկայ 1897 տարեկան

Պոչտային համար տարեկան 10 ֆր

Պոչտային համար 1/2 5

Պոչտային համար 1/2 6

Կանխիկ վճարելի

Համակ դրամ եռալն իրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ ԿԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Редакция на ВѢСТНИКЪ

„ИРАВУНКЪ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք եւ չեն դրկուիր եւ յարմար դատուածներն միայն կը հրատարակուին ամբողջովին կամ մասամբ:

Ծանուցմանց տողը 20 սանթիմ. երկրէն աւելի անգամներու համար 20 առ 100 զեղը կը լինի:

ՀԱՅ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՆ

Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ

Դպրոցական հարցաքննութիւններու անարտուժին յաջողեց գտնուածներու շարք մը, որոնք իրարու ետեւէ կը հասնին Պոչտային զանազան հայաբնակ քաղաքներէ:

Վառնայի կրթական վիճակը արդէն ծանօթ է ամենուն. անիկա ու է կերպով չարագարացներ ազգային վարժարանի գաղափարը, բան մը որ գերազանցապէս երեւան կը բերէ վառնայի հայ տարրին մտաւորական մակարդակը և ուսման մասին անոր ունեցած ըմբռնումը: Թերեւս ամեն համար ծանր գայ հրապարակով քննադատութիւն մը աշխարհի թերութիւններու համար, որոնք հանրային կամ ազգային կեանքին կը վնասեն ուղղակի, առանց զգացնել տալու: Մասնաւոր նուիրական պարտքն է միշտ մատը դնելու աշխարհի բարոյական վերքերու վրայ որոնց յարատեւութիւնը ազրիտարեւ հետեւանքներու կը յանգի միշտ: Իսկ հանրութեան կը մնայ կարեւորութիւն ընծայել մասնաւոր ըստ ին, կամ, անտեղի արհամարհանքով մը, հեգնել կամ թշնամանել զայն:

Արեւելեան ճշմարտութիւնը սա է թէ մինչեւ այս թուականը, պուլկարահայերը իրենց ամենէն յետին հոգն ըրած են կրթութեան կամ դաստիարակութեան շինիչ գործը. անիկա նկատուած է մարդուս կեանքին ամենէն անկարելի պէտքը:

Երբ վառնայէ և Ռուսոնովէ բացայայտ գանգաւորներ կուգան տեղական դպրոցներու ընթացքին և ուղղութեան մասին, ա՛յ դիւրին է երեւակայել թէ աւելի երկրորդական քաղաքներու և գիւղերու մէջ ինչ վիճակ կրնան ունենալ մեր դպրոցները:

Ազգային դաստիարակութեան անհրաժեշտ, կենսական հարկը մանաւանդ ըմբռնուելու է արտասահմանի մէջ ապրող հայ գաղթականութեանց մէջ. մեր հայրենի երկրին վրայ ամէն բան կը

նպաստէ, չորս, հոգը, վարդեր, յիշատակներ, միշտ թարմ ու վառ պահելու հայու ոգին, հայու լեզուն, հայու եկեղեցին. օտար միջնորդութիւն տակ, օտար ազդեցութեանց ներքեւ, ընկերային միջավայր ու ընտանեկան շրջանակ, միշտ կը ձգտին մեկուսացնելու և չեզոքացնելու ինչ որ տոհմային է, ինչ որ կը վերաբերի ազգային գոյութեան պահպանմանը: Զերծ մնալու համար օտարացման այս վտանգէն, մեծ ջանքեր, անկեղծ զոհողութիւններ հարկաւոր են: Ճիշդ այս բաներուն բացակայութիւնն եղած է զխառն պատճառ որ մեր արտասահմանի հին գաղթականութիւններ, լքուած նաւու մը նման որ մեղմօքէն կը սուզի ծովին յատակը, քրքրուեցան անհետ եղանքաւոր լիշտակ մը միայն թողով: Դպրոցը, եկեղեցին հետ, կը կապէ այն հզօր մագնէտը որ միշտ իր շուրջը կամփոփէ, կը հաւաքէ իր ժողովուրդը, թող չտալով որ անիկա ուղղուի մեծ տարրերու մակընթացութեան:

Պոչտային հայութիւնը, որ այսօր կարեւոր գաղթականութիւն մը կը կազմէ, վաղուց ի վեր այս ճշմարտութեան գիտակցութիւնը ունենալու էր, և անոր համեմատ վերաբերուելու էր իր ազգային դաստիարակութեան գործին:

Ասիկա չի նշանակեր սակայն թէ պուլկարահայը բոլորովին երեսի վրայ ձգած է տոհմային կրթութեան խնդիրը. մենք ըսել կուզենք թէ այն ինչ որ ըրած է, զանազան տեսակետներով թերի է և չի համապատասխաներ պահանջներուն:

Ինք կրնար իր դպրոցները աւելի օգտակար բարեկարգութեամբ մը օժտել, աւելի հոգածու խնամքով մը շրջապատել, և ձեռք բերել աշխարհի արդիւնքներ որոնց պակասը այնքան ուժգնօրէն աչքի կը զարնէ հիմակ:

Ուստի ճիշդ ժամանակն է որ պուլկարահայերը ճարտարութիւննոր գործը մը տալու իրենց վարժարաններուն: Նոյն իսկ, ոչ մի-

այն ազգային, իրենց ներթափանցաբարութեան տեսակետով ալ այս բանը կարեւոր է. մտաւորական մշակումը միակ միջոցն է առաջընթացու, զարգանալու ներթափանցաբարութեան առաւելութիւններով:

Սիլիստրէի խմբագրութեանն է կամ նման մը տխուր գոյներով կը նկարագրէ տեղւոյն թաղային երկսեռ վարժարանին վիճակը, որ երկուսն եկեր է աւազակի քննութիւններուն առիթով: Նամակագիրը ցաւելով կըսէ թէ ոչ մէկ ծնողք ներկայ չէր գտնուած հարցաքննութիւններուն տեսնելու թէ իրենց զաւակներ ինչ յառաջդիմութիւն ըրիր են ուսման մէջ: Եւ կը յաւելու.

«Մենք տեղացիներս ընդհանրապէս մեր զաւակները վարժարան կը զրկենք ոչ թէ կարգաւ գրել կամ ձեռագործ սորվեցնելու, այլ զուրկուի գտնուած փորձանքները հեռացնելով մէկ քանի ժամ հանգիստ ընելու համար:»

Մանչերու մասին աննպաստ կերպով խօսելէ յետոյ, նամակագիրը այնքան յոռետես կը դառնայ աղջկանց վարժարանի արդիւնքի մասին, որ և ոչ իսկ կուզէ բառ մը գրել անոր նկատմամբ:

Ասիկա կը նշանակէ թէ պուլկարահայերը արական սեռի կրթութեան միջ հոգ ու կարեւորութիւն չտալէ զատ, իգական սեռի կրթութեան գործը բնաբանի տեղ չեն դնել:

Գեղեցիկ սեռը տգիտութեան խաւարով պարուրուած ձգելու այս ձգտումն է պատճառը որ Պուլկարի հայուհին կը գտնուի աշխարհի կացութեան մը մէջ որ զինքը փարսալներով հեռու կը ձգէ կնոջ բռնած արդի կարեւոր գիւղերէն ընկերութեան կարգերուն մէջ, տոհմականներու դարու նուազման կէտին վրայ:

Յաւալի բան:

ՄԻՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

Անցեալ կիրակի կէսօրէն ետք տեղւոյս եկեղեցին բակը բաւական հետաքրքրաշարժ տեսարան մը կը պարզէր. փոքր խմբակներ, հոս հոն, ցիւղացան, կիզիչ արեւին տակ, կը սպասէին:

Ինչո՞ւ այդ մարդիկը եկած էին հոգ, ձգելով կիրակիի զբօսական կեանքը, յանձն առնելով սպասման մը անհանգուրժելի ծանձրոյթը: Պէտք էր որ յոյժ կենսական կամ յոյժ շահեկան դէպք մը այդպէս ակնկառոյց դիւրի մէջ պահէր հարկւոր յիսունի մօտ հայեր:

Բացատրենք այդ հաւաքման շարժառիթը:

Անցեալ շաբթու մէջ թուղթի ձեռագիր կտորներ, անծանօթ ձեռքերէ դուրս ելած ու ժողովուրդին մէջ ցրուած, կը յայտնէին թէ կիրակի օրը Միոսթեան հարցը լուծելու, կամ անոր գործադրութիւնը դիւրացնելու և կամ զարկ մը տալու համար անոր, զանազան կուսակցութիւններու ներկայացուցիչներ պիտի ամփոփուէին հոն, եկեղեցին:

Ինչպէս կերեւայ, խնդիրը կը դառնար ամենէն աղմկայող և ամենէն կնճառից հարցին շուրջը, որուն վրայ կեդրոնացած ըլլան այժմ համօրէն հայութեան յոյսը և ուշադրութիւնը:

Յիշեալ թուղթով հրաւեր կուղղուէր բոլոր կուսակցութեանց ներկայացուցիչներուն որոնք կային վառնայի մէջ:

Բայց կերեւայ թէ այս հրաւերը ամենուն համար անտրոփելի գոյն մը չունէր, վասնզի քիչեր այդ ներկայացուցիչներէն, ինչպէս ետքէն յայտնուեցաւ, յօժարած էին պատուել այդ հաւաքոյթը:

Ինչ և է. անհամբեր ամբողջ վերջապէս ուզեց որ ըլլայ ինչ որ պիտի ըլլար: Յանկարծ մէկը եւլա բարձր տեղ մը և սկսաւ խօսիլ. թաւ մօրուքով, արեւակէզ ու կորովալի գէմքով երիտասարդ մըն էր, ձայնը հզօր ու թափան-

ցանց : Զայրագին շեշտով մը կը ստորագծէր իր այն բառերը ուրոնք մասնաւոր շահեկանութիւն ունէին :

Այս երեւոյթները նոր էր եկած վառնա և կուսակցութեան մը ներկայացուցիչն էր :

Շուտով գրաւեց իր ունեւորներուն ուշադրութիւնն ու հետաքրքրութիւնը , վասնզի միութեան գաղափարը կը ջատագովէր կատարել եռանդով մը . կը հրաւիրէր ժողովուրդը շահանքով ոչ կուսակցութիւնները , ոչ անոնց ներկայացուցիչները և ոչ էլ կերպով չհաւնել անոնց արարքներուն , ցորչափ միութեան կապը չէ նուիրագործած անոնց կողմէն : Եւ իբրեւ գործնական միջոց այս նպատակին հասնելու , կառավարկէր թէ Պուլկարիոյ և Սիւմանիոյ յեղափոխական մարմինները միանան անկախ ու սերտ կապով և այս բանը լմաց տան կեդրոններուն , որոնց հետ ամէն յարաբերութիւն լսելն . ան ատեն , կըսէր , գեղորոններու յամառութիւնը պիտի մեղմանայ :

Ամբոթը ժափահարեց ատենախօսը :

Յետոյ ուրիշ երկու անձեր ալ խօսեցան միեւնոյն թեւը պաշտպանելով :

Ժողովուրդը ցրուեցաւ , սիրտը խռոված և յուսալար :

Յառաջիկայ կերակրի համար միանոյն իմաստով երկու կոշեր ելած են :

Տեսնենք ինչ պիտի ըլլայ արդիւնքը :

ՀԱՅԵՐՆ

Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Գ.

ՍԼԻՎԵՆ

Այս քաղաքը տակաւին կապուած չըլլալով երկաթուղիի գիծին հետ , Եամպօլէն կառքով կերթանք հոն երեք ժամու մէջ՝ յառաջանալով դէպ ի արեւմտեան հարաւ :

Սլիվէն (իսլիմիա) 25000 բնակիչ ունեցող քաղաք մըն է որ իր պտուղներու և ջրի առատութեամբ ու լաւութեամբ կը յիշեցնէ մասամբ Հայաստանի քանի մը ջրաբեր և պտղալի քաղաքները : Թուրք տիրապետութեան ներքեւ գտնուած ժամանակ՝ Սլիվէն ունէր շուրջ 2000 հոգի իսլամ բնակիչ . ասոնց մեծամասնութիւնը տակաւ գաղթեց Թուրքիա , այնպէս որ հիմա հազիւ 300 թուրք ընտանիքներ կը գտնուին այստեղ :

Հայ ազգաբնակչութիւնը կը բաղկանայ գրեթէ 80 ընտանիքէ , որոց 8ը գաղթական . 30-35 հայ պանդուխտ ամուրիներ ալ կան Պուլսոյ ջարդէն առաջ կամ ետքը

գաղթած : Առհասարակ բոլոր Հայերը խանութպան ու արհեստաւոր են : Ունին փոքր եկեղեցի մը Ս. Ստեփաննոս անունով , զոր 65 տարի առաջ կառուցեց Թագապետի Հաճի Պօղոս Մուամէ . լէճեան՝ մօտ 80000 զուրուշ ծախքով : Այս մարդուն գործունէութիւնը արժանի է յիշատակելու : Հաճի Պօղոս աղա եկեղեցիին շինութեան ինպատու հանգանակութիւն ընելու համար շատ տեղեր կը պտըտի , կերթայ մինչեւ Հայաստան և իրաւիա . ճամբորդութիւնը զանազան աննպատակ հանգամանքներու պատճառով երկու տարի կը տեւէ և այդ միջոցին Սլիվէնի մէջ լուր կը տարածուի թէ մեռած է : Սլիվէն վերագառնալով կը ձեռնարկէ եկեղեցիին շինութեան , որուն չը բաւեր հանգանակութեանէն գոյացած դրամը : Բարեպաշտ Թագապետի իր քսակէն ալ կարեւոր գումար մը շինութեան յատկացնելէ ետքը մինչեւ իսկ իր կնոջ վիզի ոսկիները , այն ժամանակի իգական սեռի գլխաւոր զարդերէն մին , կը նուիրէ նոյն նպատակին , իր կեանքի գլխաւոր նպատակին , որուն վերջապէս կը հասնի այն քան աշխատութիւն և դրամ զոհելով : Սակայն այնուհետեւ ալ ուրիշ գառն օրեր կը սպասէին իրեն : Իր ազգակիցներ ոմանք կը ամբաստանեն զինք իբր շորթող հանրային դրամի . իրմէ հաշիւ կը պահանջեն և սովորական երկպառակութիւնը չուշանար յուզել և կուսակցութեանց բաժնել ժողովուրդը : Անոնք որ եկեղեցիին համար չէին յօժարած ամենափոքր աշակցութիւն մը ընել Հ. Պօղոս աղային , անոր ամենէն կատարել հակառակորդները դարձան երբ շինութիւնը աւարտեցաւ :

Սլիվէնոյն երեւոյթները հայութեան կեանքին մէջ ամէն տեղ : Հազիւ ասկէ 22 տարի առաջ՝ Պատրիարքարանէ Սլիվէն զրկուած վարդապետի մը նախաձեռնութեամբ՝ եկեղեցիին ճակատը քար մը կը զետեղուի՝ շինութեան թուականը և Հաճի Պօղոսի անունը յիշատակող . բայց այս յիշատակարանի մէջ ալ չէ գրուած իր մականունը , զոր իր գէրեզմանաքարին վրայ նայնպէս չի գտայ : Շատերու հարցուցի , չէին գիտեր . և վերջապէս միայն իր ազգականներէն մին , նոյնպէս Թագապետի կամ աւելի ճիշդ Թագապետի սերունդ , կրցաւ ըսել թէ Մուամէ . լէճեան էր այն կրօնականը բարեգործ մարդուն մականունը :

Քանի մը տարիէ ի վեր թաղ խորհուրդի որոշումով իր հոգին համար պատարագ կը մատուցուի իր կառուցած եկեղեցիին մէջ :

Եկեղեցին ունի 3 ջաղաք ուրոնք յաճախորդի նուազութեան պատճառով տարին մօտ 6-700

լէվ միայն հասոյթ կը բերին . ունի նաեւ քաղաքին մօտ արտ մը անմշակ թողուած , հին գերեզմանատուն մը քաղաքին մէջ և գետին մը որուն վրայ մեր Սլիվէնցի ազգայինք դիտաւորութիւն ունին երկու խանութ շինելու : Ինչպէս ի Պուլկար՝ այստեղ ալ քահանային յատկացուած է փոքր ամսաթոշակ մը :

Վարժարանը՝ Լուսաւորչիան աւանդով եկեղեցիին շրջափակին մէջ է . չէնքը ցած , նեղ և օգէ զուրկ ըլլալով , բնաւ յարմար չէ կրթարան ըլլալու , բայց Ազգ. սնտուկին անձկութիւնը չնրբեր որ ուրիշ չէնք մը վարձուի և հոն փոխադրուի դպրոցը : Թաղ խորհուրդը որոշած է քանի մը նոր լուսամուտներ բանալ դպրոցին մէջ՝ զայն աւելի օգտաւն ընելու համար , ինչ որ անհրաժեշտ հարկաւոր է տղաներուն առողջութեանը :

Երկսեռ տղաները միասին դաս կառնեն և կուսանին . իրենց թիւը 55 է , 26ը աղջիկ , 29ը մանչ : Վարժարանի արձակուրդը սկսած ըլլալով , չկրցի դասախօսութեանց ներկայ ըլլալ , բայց ըստ վկայութեան բազմաթիւ ազգայիններու , երկու վարժապետները խղճմտութեամբ կը կատարեն իրենց պաշտօնի պարտականութիւնները և ամէն ոք գոհ է իրենցմէ : Տղաներուն վրայ զգալի բարեփոխութիւն մը կը տեսնուի 5-6 ամիսէ ի վեր : Ասոր հետեւանքով թաղ խորհուրդը և հոգաբարձութիւն անսովոր հոգածութիւն մը ցոյց կուտան վարժարանին համար . և վարժապետներուն ամուսնականը կաւոնաւորուակու կը վճարուին :

Վարժարանը աւարտած տարիին մէջ բաժնուած էր երեք դասարանի , որոց ուսումը կաւանդուի հետեւողութեամբ նախակրթական ծրագրին , զոր Ուսումնական խորհուրդը հրատարակեց 1890ին : Վարժապետները , որոց մէկը կեդրոնականի աշակերտ է , առած տեղեկութեանց համեմատ՝ կը հետեւին դիւրութեան , տղաներուն հասկողութեան աստիճանին համապատասխան մէթոտներու : Յառաջիկայ տարւոյն մէջ պիտի սկսի Պուլկարեան լեզուի ուսումնալ : Վարժարանին տարեկան ծախքը մօտաւորապէս 1600 լէվ է : Տարին 900 լէվ կը գոյանայ դպրոցական տուրքէն և պատահական նուէրներէ . մնացած 700 լէվը կը վճարուի եկեղեցիին հասոյթէն :

Սլիվէն ալ ունեցեր է իր կարօտ գաղթականները , որոց թիւը մինչեւ 120ի բարձրացեր է երբեմն : Երկու ազգայիններէ բաղկացած յանձնաժողով մը որքան կարելի էր , խնամիր է զանոնք հանգանակութեան մը արդիւնքով և այն նպատակներով , զորս Օրիորդ Ֆրայզէր վառնայէն և Միսս Ալէն Պուլկարէն խրկած են յանձնաժողովին՝ Սլիվէնի Պուլկար միսիօ-

նարի մը ձեռքով : Միսիօտական է ըսել որ այստեղ մնացած սակաւաթիւ գաղթականները յաջողած են , մէկ երկուքէն զատ , ապրուստի միջոց մը գտնել :

Գոհութեամբ թողուցի Սլիվէնը որուն նիւթական համեստ կարողութեան տէր հայութիւնը կը ջանայ կարելիութեան սահմանին մէջ կատարել իր ազգային և եկեղեցական պարտականութիւնները : Ըստ ինքեան արգարութիւն մըն էր այստեղ գտնուող յիշատակել Սլիվէնի ազգայիններէն մէկին անունը . սակայն լուսութեամբ կանցնիմ առայժմ , զի կը վախճամ որ իր համեստութիւնը կը վերաւորեմ և մանաւանդ իր ազգանուէր գործունէութեան կը մնասիմ իր անունը հրապարակ հանելով :

Վ Ի Ճ Ա Վ Ա Գ Ի Ր

Վերջերս հատոր մը իւրոյս ընծայուեցաւ ու անունով « Ընդհանուր արդիւնք 1893 յունուար 1 ի իշխանապետութեան մարդահամարին » որ վիճակագրական յոյժ հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ Պուլկարիոյ բնակչաց թիւին վրայ :

Գլխաւոր կէտերն են հետեւեալները .

1. Պուլկարիա , 1893 յունուար 1 ին կը պարունակէր 1,690,626 կին և 1,620,087 այր , այսինքն 3,310,713 բնակիչ , որ կընէ 100 բնակիչի 51.07ը կին և 48.93ը այր :
2. Բնակչութիւնը կը բաղկանար 580,125 ընտանիքէ որուն 10,098ը կը պարունակէ 1 անդամ , 198,292ը՝ 1-5 անդամ , 329,249ը՝ 5-10 անդամ և 42,491ը՝ 10 անդամէն աւելի :

Պուլկար հողին վրայ գտնուող զանազան ազգերու թիւը , լեզուի տեսակէտով , հետեւեալն է .

	Այր	Կին
Պուլկար	1,277,923	1,227,403
Ռուս	509	419
Սերպ	433	385
Թուրք	291,820	277,908
Յոյն	30,064	28,454
Հրեայ	13,747	13,784
Գնչու	26,676	25,456
Գերման	1,722	1,898
Ֆրանսացի	174	182
Ռուման	1,674	30,954
Իտալացի	554	249
Հայ	3,455	2,990
Թաթար	8,255	8,035
Չանազան	2,946	1,479
Չնշանակուած	674	491

Պուլկարիոյ մէջ 90-95 տարեկան մարդոց թիւն է 4,544 այր , 4,430 կին , իսկ 100 տարու և անկից վեր տարիք ունեցողներուն թիւը՝ 1,531 այր , 1841 կին :

Պուլկարիոյ մէջ կան 6632 կոյր և 912 համր , 5122 խուլ , 1611 խուլ—համր , 2242 խելագար ,

էր : Ահա՛նամէ թարափէյնտէն իմ-
զումանդատն սօնրա , բազար էր-
թէսի կիւնիւ Սուլթան Բուսնիա
էլիսինի Երուսղա չաղըրուպ իքի
սաաթ կէօրիւմիւն տիր :

ԳՕՆՖԵՐԱՆՍ

Մուսալէհէ շէրաթին թանգի-
մի իշիւն թօրհանէտէ թէճէմմիւ
օլընան էլիլէր մէճիսի՝ Սուլթա-
նըն մուսալէֆէթի իլէ թաթիլ
օլընմըլ օլուպ , պիւլաթէրէ տէվ-
լէթլէրին Պապը Ալիյէ վէրմիւ
օլտըզլուրը մուէսսիր վէ միւլթէ-
ֆիք նօթալարըն սէմէրէսի օլա-
րաք , Սուլթանըն իրատեսի իւլ-
րէ՝ Թէվֆիք բաշա էլիլէրին հէ-
նիտէն գօնֆէրանսա տալէթ իթ-
միւ վէ միւլաքքէրէլէրին տէվա-
մընա մուսալէրէթ օլունմըլ իտի-
Սէֆարէթհանէլէրտէն մահէլինէ
կէօնտէրիւմիւլ օլան աթաշէ միւլ-
թէրլէր մէճիստէ հաղըր պուլը-
նարաք սինօլար իշիւն թէրթիպ
իթտիգլէրի բարօրթլար իւղէրինէ
միւլաքքէրէլէր ճէրհան իթտիք-
տէն սօնրա , Թէվֆիք բաշա էլ-
իլէրին գարարընա թէրթար մու-
խալէֆէթ իթտիկի սէպէպլէ գօն-
ֆէրանս թաթիլ օլընմըլ օլտըզլ-
նը աթիտէքի թէլէկրաֆ պիւտի-
միւ տիր :

Իստրա 20 Յուլիս . — Աման
Բեյքըրըն Սթանպուլտան ալտըր
մալիւմաթա կէօրէ , աթաշէ միւլ-
թէրլէրին վէ էլիլէրին սինօր ի-
շիւն թալին իթտիգլէրի խաթիթ
էլան թիւրք հիւքիւմէթինտէն գա-
պուլ օլընմալը վէ պու սէպէպլէ
էլիլէր վէ Թէվֆիք բաշա պէյ-
նիտէն ճէրհան իտէն միւլաքքէրէ
մուլազլաթէն թաթիլ օլընտը ի-
սէտէ՝ մէսէլէնին խօշնուտիլէթլէ
հալ օլընաճաղընը թէվֆիք բաշա
էլիլէրէ պիւտիլմէքտէ տիր : Էլ-
իլէր պու սապահ քէնտի օլէյիւն
լէրինտէ պիր սըղուն միւլաքքէրէ
իթտիլէր . վէ քէնտի հիւքիւմէթ-
լէրինտէն թալիմաթ իսթէտիլէր :

Աթիսն 21 Յուլիս . — Թիւրքիա
Էլօրդանըն արդուլարընը գապուլ
իթմէտիկի հալտէ , անա գարըն
ճէպր իսթիմալ օլընմալընը իթա-
լիա տիկէր տէվլէթլէրէ թէքլիֆ
իթտի :

Թիւրքլէր վէ Թէսալիալը ասը-
լար արաւընտա պիր գաշ միւսա-
տէմէ վուգու պուլտու :

Իշպու թէլէկրաֆըն խիւաֆըն-
տա օգունտըղընա կէօրէ , պու
բէնչէնպիհ կիւնիւ թօրհանէտէ
էլիլէր վէ Թէվֆիք բաշա մէճիս
իթմիւլէր տիր :

Պապը հալաթիսաթա պիւնաէն ,
Թիւրք ասքէրլէրի Թէսալիալտան
չըգմալտան էվլէլ թալմինաթը
հարպիլէնին էօտէնմէսինի Սուլ-
թան արզու իթմէքտէ իմիւ :

Կ Ի Ր Ի Տ

Գանհատան Սրահուրտուս չէ-
քիլէն պիր թէլէկրաֆ կիւնիւն
աշվալի հաղըրէսինէ տալիր ա-
թիտէքի մալիւմաթը վէրմէքտէ
տիր :

Կէչէն ճիւմա կիւնիւ պաշըպ-
զուգլար Բէթիմօ ճիւլարընտա
խրիսթիանալըն իւղէրինէ հիւ-
ճիւմ իտուպ , անէլտէն 3 քիշի-
էօլաթիւրաթիւլէր վէ 300 բէս հալ-
վան սիւրաթիւլէր : Ֆէրատսը կիւ-
նիւ խրիսթիանալար տալի տէօրթ
նօգլթատան իսլամլար իւղէրինէ
հիւճիւմ իտուպ , պիր թիւրք էօլ-
աթիւրաթիւլէր վէ պիր ասքէր աղըր
սուրէթտէ ասրէլէտիտիլէր :

Կիւնիւն հէնիտէն թիւրք աս-
քէրի կիւնտէրիլմէսի հաղըր-
տա էլիլէրին թալէպի իւլլէ ,
Կէչէն կիւն Պապը Ալի հէնի աս-
քէր կէօնտէրմէք լէտապիրինտէն
սարֆ նալար իթմիւլ օլտըզլըր
էլիլէրէ պիւտիլմիւ տիր : Ֆազաթ
Սթանպուլ կաղէթալարըն էլան Ճէ-
վաթ բաշանըն կիրիտէ կիթմէք
իշիւն հաղըրլանմազտը օլտըզլընը
հաղըրօրար :

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Բէթրապուրկտան ալընան բէմի
մալիւմաթլարա կէօրէ , Սթանպուլ
Բուսիա էլիլիսի Մ . Նէլիտօֆ Բօ-
մալա էլիլ թալին օլընմըլ տըր ,
վէ Սթօգօլմ (Շուէս) Բուս էլիլիսի
Մ . Ջինօվէֆ ալըն մէմուրիլէթլէ
Սթանպուլ կէլէճէք տիր :

Սերպիւնըն հարպիլէ պիւտէ-
սինէ 9,230,122 ֆրանկ զամմ՝ իթ-
մէք թէքլիֆի Սքուրչիւնտա (մէճ-
լիսի մէպուսան) միւլթէթիգլէն
գապուլ օլընմըլ օլտըզլընը Պէլկ-
լատտան քէշիտէ օլընան պիր թէ-
լէկրաֆ պիւտիլմիւ տիր :

Թիւրքիանըն տէօրտիւնճի օր-
տուսընտա պուլընան ասքէրլէրէ
Մալլէր թիւֆէնլէրի վէրիլէճէք
օլուպ , Թօգաթ , Ամասիա վէ Սի-
վաս ալալարընա մէքքիւր թիւ-
ֆէնկէր թէվլի օլընմըլ տըր :

Սօն վուգուլթլարտա տէնիպտէ
վէ գարատա զարարտիտէ օլան
թիւրք թապուլարըն զարարարը-
նը Եունան հիւքիւմէթինէ թաղ-
մին իթտիլմէք մագսէտի իլէ
Թիւրքիա պու զարարարըն հէր
թարաֆտա գալէմէ ալտըրմազտա
տըր :

Սթանպուլ Ֆրանսա էլիլիսի Ս .
Գամպօն Սթանպուլտան միւլթարէ-
գաթլէ կիրիտ թարըզը իլէ
Մարսիլիայա կիթմիւլ օլուպ ,
զէվճէսինի գապիլիլէրէ պըրադ-

տըզտուն սօնրա օգուստու 2 տէ
Սթանպուլ ալտէթ իտէճէք տիր :

Բարիս թիւրք էլիլիսի պիր ի-
լան չըգարուպ , անընէ Ֆրանսա-
տա պուլընան Սուլթանա մուսա-
լիֆ կէնճ թիւրքլէրի սէֆարէթ-
հանէլէ տալէթ իթմիւլ վէ օնլա-
րա թիւրքիտա պէօլիւք մէմու-
րիլէթլէր վէրիլէճէկիւնի պիւտիլ-
միւ տիր : Քէչա թիւրք թալէպէ-
լէրին տալի 10 կիւն զարֆընտա
սէֆարէթէ կէլիւպ , իսթիլէրի
գալտ իթտիլմէլէրին վէ անլարա
150 շէր ֆրանկ մաալ թալիսի
իլէ իսթէտիլէրի մէքթէպլէրտէ
թահսիլէ տէվլամ իթմէլէրինէ սու-
հուլէթ վէրիլէճէկիւնի իսթաթ ի-
տիւպ , պու տալէթլէ իճապլէթ
իթմէլէրին օսմալը թապուսը
թանըլմալաճաղարընը իլան իթ-
միւ իսթէտէ , պու տալէթլէրմէլէ
հիւ պիր քիմիւն իճապլէթ իթմէ-
միւ տիր :

Քէչա պապը մէնպուլարտուն ա-
լընան մալիւմաթլարա կէօրէ , հէ-
նիտէն Սուլթան՝ Թիւրքիա խա-
րիճինտէ պուլընան էլիլմիւ վէ
թիւրք գալիլէրինէ մէմուրը
մալիսուս Եօլլալուպ , անլարըն
թէրքի մէսլէք իթմէլէրի իշիւն
պալաշիլէր վէ մէմուրիլէթլէր վաս
իտէճէք իմիւ :

Վաղը , կիրակի , Եկեղեցիին բակը
տեղի ունենալիք գումարման մէջ ի
մասին Միւլթեան խնդրոյն , պիտի
խօսի Դաշնակցականներու Պ . Ներկա-
յացուցիչն ալ :

Ա Ջ Դ

ԹԱԳԱՒԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Նիս 10 Յուլիս 1897

Խորհուրդս իմացած ըլլալով որ հա-
խորդ կիրակէ ամսոյս Եին ազգայինք
ոմանք Եկեղեցւոյս բակին մէջ գումա-
րում մը կազմած եւ քաղաքական գոյն
ունեցող նիւթերու վրայ ճառած են ,
միանգամայն «Կատակ» լրագրոյ այսօր-
ուան թիւ թերթին մէջ հրատարակ-
ուած աղէ մը տեսնելով որ միեւնոյն
կերպով գումարում մը ընելու պատ-
րաստութիւններ կան նաեւ յառաջի-
կայ կիրակէ օրուան համար :

Նկատելով որ ազգային Եկեղեցւոյ
չըջախակիւն մէջ առանց ազգային իշ-
խանութեանց գիտակցութեան ո՛ր եւ է
գումարում չկրնար տեղի ունենալ :

Նկատելով մանաւանդ որ վերոյիշեալ
գումարումներու նիւթ կազմող խնդիր-
ները ունին այնպիսի բնոյթ մը որ
կրնան շնասել Պուլկարիա գտնուող
ազգային գաղթականութեան շահե-
րու :

Նկատելով միանգամայն որ սոյն գու-
մարումներու նախագահող եւ կարգա-
պահութեանը պատասխանատու ո եւ է
անձնաւորութիւն մը չգտնուելով պա-
տասխանատուութիւնը հանդէպ օրի-
նաց երկրին՝ կը ծանրանայ Թաղ . Խոր-
հուրդս վրայ :

Որոշում կառնէ
1 . Հրաւիրել Պատուարժան ազգա-
յինքը հրաժարել Եկեղեցւոյ մէջ այդ-
պիսի գումարման մը ձեռնարկել :

2 . Ամէն պատահականութեան դէմ
ո եւ է պատասխանատուութեան զերծ

միալու համար եղելութիւնը յայտարա-
րել քաղաքային իշխանութեանց :

3 . Հրատարակել սոյն որոշում եկե-
ղեցւոյ դուռը փակցուած յայտարարու-
թիւններով եւ «Իրաւունք» լրագրոյ
յառաջիկայ թուոյն մէջ պաշտօնական
ազգով :

Չայս ի պիտութիւն յարգի ազգայնոց
բերելով սիրենք յուսալ որ կը հաճին
ի սէր ազգային շահերու համակերպիլ
խորհրդոյս որոշմանց եւ տեղի չապ
ո եւ է անհաճոյ դէպքի մը :

Ի դիմաց Թաղ . Խորհրդոյ
Վ . Ասինազարի Ասինապիտ
Յ . ՄԱՎԻ Մ . Ս . ՄԻՆԱՍԵԱՆ
Վասնա , 10/23 Յուլիս 97

ԴԱՆՈՒՑՈՒՄ

Վաղը կիրակէ հրաւիրուած են ներ-
կայացուցիչք բանակցիլ Միւլթեան
մասին :

Դաշնակցականք գալերին Թուրքի-
կով գիտցուցած ըլլալուն այս անգամ
վաստօրէն կը հրաւիրուք հասարակու-
թիւնը ներկայ գտնուիլ Եկեղեցին :

Միւլթեան փափագողներու
1—1 Վարչութիւն

ՏՕՐՔ . Ե . ԹՈՂԱՄԱՍԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արդոյ հա-
սարակութեան թէ վերադարձած է
Սոֆիան եւ կընդունի հիւանդներ ա-
մեն օր իր տունը ի Պալլը Բազար ,
առաւօտները ժամը 10էն 12 , իսկ կէս
օրէն վերջը 2էն 5 : Չորեքշաբթի օրերը
կէս օրէն վերջը ձրիապէս կը դադար-
նէ : 8—10

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑՈՒ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՄ

ՄՐՄՈՒՆՉ ՀԱՅԿԱԿԱՆ

Սոյն Երգարանը որ կը բաղկա-
նայ առաւել քան 100 երեսէ , կը
պարունակէ շատ մը հին եւ նոր ա-
զատ երգեր , զորս այժմ ժողովորդն
ախորժանօք կ'երգէ :

Փափաքողք կրնան ստանալ զայն՝
փոխարէնը 1 ֆրանկի նսկակաղորոշմ
(բօստի բուլ) խրկելով խմբագրու-
թեանս , կամ գիմելով հետեւեալ
հասցէներուն .

Տեարք
Արիս Դուրպէթ . Ռուսնուգ
Տիգրան Աճման Ծուլուր
Կարապետ Թօբազալ . Սիլիստրէ
Մարտիրոս Քէնտիկեան Պուրկալ
Խաչիկ Թօնաֆէնան Սիլիստրէ
Ալէքս . Տէմիրճիպլ . Ֆիլիպէ
Իսկէնտէր Արալանան Տօպրիլ
Յովհաննէս Պիպէնեան Պուրկալ
Արթ . Տէր Դեւոնդ քէնյ . Կալաց
Թէօֆիլ Թէրզեան Քէօտէնճէ
Ասատուր Բրուտեան Գահրիբ
Տիգրան Արալանան Աղէքսանտրիա
Աղգ . վարժարանաց համար՝ երբ
գէթ 10 հատ կ'ուզուի , 20 առ 100
զեղչ կը լինի :

Ա Ջ Դ

«ԻՐԱՆՈՒՆՔ»-ի վարչութիւնը
յարձն կառնու պատրաստել Հա-
յերէն , Պուլկարերէն , Ֆրանսերէն
եւ Յունարէն լեզուներով ընկա-
լալեր , հասցէներ , նամակաղլուխ-
ներ , մահադգեր , յայտարարու-
թիւններ , հարսանիաց եւ այլ հրա-
ւիրագրեր , այցաքարտեր եւն , եւն :

Գնեք չափաւոր
Փափագողք պարտին դիմել խմ-
բագրութեանս հասցէին :